

2013թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու
կանխատեսումը ՀՀ-ում

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2013թ. - 31.12.2013թ.

Թեմայի ղեկավարը

Տիգրանյան Իշխան Տաճատի

տ.գ.թ., պրոֆեսոր

Թեմայի մասնակիցներ

1. Մկրտչյան Թաթուլ Մելսի – գիտաշխատող
2. Ավագյան Գայանե Արամի – գիտաշխատող
3. Վարդանյան Քնարիկ Ջոնիկի – գիտաշխատող
4. Հայրապետյան Արփինե Արծրունու –գիտաշխատող
5. Միքայելյան Միքայել Վարազդատի - գիտաշխատող
6. Գսպոյան Գրիշա Մախակի - գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Տնտեսական կայունացման քաղաքականության խնդիրն է վերլուծել անկայունության աղբյուրները, գնահատել վնասները և համապատասխան մոդելի ընտրության ճանապարհով ապահովել տնտեսության կայունությունը: Անկայուն մակրոտնտեսական իրավիճակի ձևավորման պատճառը ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի կտրուկ փոփոխություններն են: Հետևապես շատ

կարևոր է պարզել, թե դրանք ինչպես են ազդում տնտեսական ընդհանուր հավասարակշռության վրա:

Եթե ընդհանուր տնտեսական հավասարակշռության ապահովման գործում երկար ժամկետում որոշիչն արտադրության գործոնների շուկան է, այսինքն ամբողջական առաջարկը, ապա կարճ ժամկետում՝ ամբողջական պահանջարկը, որը կարգավորվում է փողի շուկայի հետ փոխազդելու շնորհիվ և ձևավորում արդյունավետ պահանջարկ:

ՀՀ տնտեսական իրավիճակը բնութագրվում է կարճաժամկետ հավասարակշռության պայմաններով, ուստի ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունը արդիական է ինչպես տնտեսական քաղաքականության մշակման, այնպես էլ արդյունքների գնահատման տեսանկյունից:

Բացի դրանից 21-րդ դարի սկզբի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընդգրկունությունը, բարդությունն ու ինտենսիվությունը ցույց տվեցին, որ անգամ զարգացած շուկայական տնտեսությունն ի վիճակի չէ ինքնակարգավորվել և սովորական պայմաններում չի երաշխավորում գների հարաբերական կայունություն և բարձր զբաղվածություն: Տնտեսության կայունացման և տնտեսական ճգնաժամերին հակազդելու համար անհրաժեշտ է մակրոտնտեսական կայունացնող քաղաքականություն՝ առաջին հերթին ամբողջական պահանջարկի վրա ազդելու, ավելցուկային պահանջարկը զսպելու կամ անբավարար պահանջարկը խթանելու միջոցով:

Ամբողջական պահանջարկի կարգավորումը ենթադրում է ամբողջական պահանջարկի գրագետ կանխատեսում, ինչը հնարավորություն կտա խուսափել երկրում տնտեսական իրավիճակի կտրուկ տատնումներից, կամ գոնե հարթել ճգնաժամային դրսևորումների հետևանքները, էականորեն բարձրացնել վարվող տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և, վերջին հաշվով, ապահովել համաչափ, կայուն տնտեսական աճ: Միաժամանակ ամբողջական պահանջարկի կանխատեսումը կարևոր է՝ տնտեսությանը պետական միջամտության չափը ճշգրտելու, մասնավոր հատվածի վրա վերահսկողություն սահմանելու, հարկային համակարգի գործունեության արդյունավետությունը

բարձրացնելու, ստվերը կրճատելու, ինչպես նաև կանխատեսված պահանջարկը խթանելու կամ կաշկանդելու տեսանկյուններից:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Հաշվի առնելով այն իրողությունը, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է լրիվ զբաղվածության մակարդակին չհամապատասխանող հատվածում, ամբողջական պահանջարկի վերլուծությունը և կանխատեսումը իրականացվելու է 3 կտրվածքով

1. ՀՀ ամբողջական պահանջարկի վրա ազդող գործոնների տեսապրակտիկ դասակարգում, դրանց ազդեցությունների գնահատում և փոփոխությունների պատճառների և միտումների բացահայտում,
2. Ամբողջական պահանջարկի կանխատեսում, որը ներառելու է հետևյալ փուլերը.
 - ✓ շուկայի և մրցակցային միջավայրի հետազոտում և շուկայի սեզմենտների առանձնացում,
 - ✓ ամբողջական պահանջարկի վրա ազդող գործոնների վերլուծություն և փոխադարձ կապված ցուցանիշների սահմանում: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի համեմատական վերլուծություն,
 - ✓ կանխատեսման մեթոդների ընտրություն,
 - ✓ կանխատեսման մեթոդի հուսալիության գնահատում,
 1. ամբողջական պահանջարկի կանխատեսում,
 - ✓ բնակչության, ձեռնարկությունների և պետության ամբողջական պահանջարկի ավելացման հեռանկարների որոշում:
3. Ամբողջական պահանջարկի խթանման նպատակով պետության հարկաբյուջետային, դրամավարկային, հակամենաշնորհային, կառուցվածքային, արտաքին առևտրային քաղաքականության միջոցառումների առաջարկում:

Ամբողջական պահանջարկի վրա ազդող գործոնները դիտարկվելու են չորս խոշոր խմբերով.

- Սպառողական պահանջարկի վրա ազդող ոչ գնային գործոններ,
- Ներդրումային պահանջարկի վրա ազդող ոչ գնային գործոններ,
- Պետական հատվածի պահանջարկի վրա ազդող ոչ գնային գործոններ,
- Ներմուծման և արտահանման (զուտ արտահանում) վրա ազդող ոչ գնային գործոններ:

Ուսումնասիրության ընթացքում փորձ է արվելու բացահայտել ՀՀ տնտեսության համար սպառողների վարքագիծը, մասնավորապես առանձնացնելով հետևյալ խմբերը (օգտվելով սպառման տեսություններից)․

1. Սպառողներ, որոնք բանական վարքագիծ են դրսևորում՝ հարթելով սպառումը ամբողջ կյանքի ընթացքում
2. Սպառողներ, որոնք չեն օպտիմալացնում իրենց վարքագիծը՝ ապրելով այսօրվա օրով,
3. Սպառողներ, որոնք ունեն սպառելու որոշակի սովորույթներ:

Սպառողական վարքագծի ուսումնասիրության ժամանակ կարևորվում է իրացվելիության սահմանափակումներ և վարկերի հասանելիության խնդիրներ ունեցող սպառողների գոյությունը (ԿԲ-ի ծրագրով այս հարցի վերաբերյալ մեր աշխատանքային խմբի կողմից լուրջ ուսումնասիրություններ են կատարվել): Կարևոր է նաև բացահայտել այնպիսի սպառողների տեսակարար կշիռը, որոնք օպտիմալացնում են սպառումից ստացված օգտակարությունը՝ հետևելով տոկոսադրույքին (տոկոսադրույքի բարձրանալու դեպքում այսօրվա սպառումից որքան կկրճատեն՝ վաղը ավելի շատ սպառելու ակնկալիքով):

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Հետազոտական ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են.

1. Ամբողջական պահանջարկի առանձին բաղադրիչների կանխատեսում,
2. Յուրաքանչյուր բաղադրիչի վրա էական ազդեցություն ունեցող գործոնների բացահայտում և ազդեցության գնահատում,
3. Փաստացի և ցանկալի (արդյունավետ) պահանջարկների ճեղքի գնահատում,
4. Պահանջարկի ճեղքի կրճատման գործում յուրաքանչյուր բաղադրիչի ազդեցության չափի որոշում,

5. Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի բարելավման հնարավորությունների բացահայտում,
6. Առաջարկություններ, որոնք էապես կբարձրացնեն ամբողջական պահանջարկի կարգավորմանն ուղղված մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությունը,
7. Արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավման հնարավորությունների բացահայտում,
8. Ամբողջական պահանջարկի առանձին բաղադրիչների կառուցվածքի բարելավման հնարավորությունների բացահայտումը,
9. Ընդհանուր հավասարակշռության ձևավորման գործում ամբողջական պահանջարկի դերի գնահատում:

Գիտական աշխատանքի արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված գիտական հոդվածներ և զեկուցումներ գիտաժողովներում: